

ՈՌԻՔԵՆ ԱՆԳԱԼԱԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ. ՄԻ ԿՅԱՆՔԻ ՓՈՐՁ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ո՞վ կարող է հաշվել՝ մարդը որքան անգամ է ազգականների կամ ընկերների, աշխատակիցների, ծանոթ-անծանոթների հետ նախատեսված կամ անսպասելի հայտնվել միևնույն շրջապատում. դրա համար որքան առիթներ և իրավիճակներ կան:

Հիմա անդրադառնանք հայերին... Ի՞նչ և ինչպե՞ս են ուտում, խմում, ինչի վրա են ծիծաղում, ինչի մասին են վիճում, ինչից տխրում, ինչ են երազում, երգում և խորհում հայերը: Ո՞ւմ մասին կարելի է ասել՝ տիպիկ հայ է: Ինչպե՞ս է կազմավորված ընտանիքը, ազգը Հայաստանում և Սփյուռքում: Որո՞նք են հայկական ճաշկերույթի առանձնահատկությունները Հայաստանում և Սփյուռքում: Ո՞վ և ինչպե՞ս է թելադրում ճաշկերույթի ավանդույթները: Ինչպե՞ս են պատիվ տալիս նշանավոր հայերին և հարսանիքներ տոնում: Բնականաբար, այս հարցերը չունեն և չեն էլ կարող ունենալ միանշանակ, սպառիչ պատասխաններ, որովհետև յուրաքանչյուր հայ կարող է ուրույն պատասխան տալ դրանց: Ես փորձել եմ տեսնել հիշյալ խնդիրների աշխարհայացքային կտրվածքը միայն: Թվում է՝ ահա և սկսվեցին հայկական առանձնահատկությունները...

Բազում դարերի և հազարամյակների ընթացքում ոչ իրենք՝ հայերը, ոչ էլ նրանք, որ փորձել են ուսումնասիրել հայերին, չեն կարողացել բավական չափով հասկանալ և վերլուծել հայ ժողովրդի ազգային բնավորությունը: Եղել են և կան ազգային բնավորության մասին որոշ (ոչ քիչ) քարացած բնորոշումներ (ինչպես յուրաքանչյուր ժողովրդի դեպքում), նուրբ նկատառումներ, համեմատություններ, ընդհանրացումներ, արտահայտություններ, սակայն չկա այդ ամենը ամբողջացնող աշխատանք: Այնուամենայնիվ, չեն կարող հիացնումնքս չարտահայտել խորենացու և Շնորհալու՝ ազգի մասին թողած խոհերի վերաբերյալ: Իսկ 20-րդ դարում այդ թեմայի շուրջ բավականին խորը, սուր և հետաքրքիր մտքեր են արտահայտել Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը, Գ. Նժդեհը, Դ. Անանունը, Ա. Ջիվելեգովը... Հայերի մասին խոր ուսումնասիրություններ կարելի է գտնել նաև հին պատմիչների և փիլիսոփաների աշխատություններում, ինչպես նաև Կանտի, Բայրոնի, լորդ Բրայսի, Բորխեսի, Բրյուսովի, Ա. Ֆրանսի, Ֆ. Նանսենի, Ա. Թոյնբիի մոտ... Ցանկը կարելի է շարունակել...

Եվ այսպես, առջևում ճաշկերույթն է... Յուրաքանչյուր հայի համար ձգողական մեծ ուժով գործող ընդհանուրի և անհատականի, ազգայինի, դասայինի, տարիքայինի և դրանցից դուրս ունեցած զգացողությունն էլ հենց հայկական ճաշկերույթն է: Շատ տարիներ առաջ համայն հայության կաթողիկոս Վազգեն Առաջինի՝ իրապես ազնվական, համեստ և արժանապատիվ մարդու հետ իմ առաջին հանդիպման ժամանակ ես լսեցի. «Հայը որևէ երկրում, ասենք՝ ԱՄՆ-ում, Արգենտինայում կամ

Ավստրալիայում, իմանալով, որ ինչ-որ տեղ ապրում է իր հայրենակիցը, առիթը չի կորցնի և կգնա ծանոթանալու նրա հետ: Ոչ մի այլազգի չի գնա...,- ասաց նա և շարունակեց,- որովհետև այդպիսին է մեր պատմական ճակատագիրը՝ գունավորված եղեռնով»: Ավելի ուշ ես ցանկություն ունեցա գրելու մեր ազգային ինքնագիտակցության մասին և սկսեցի նյութեր հավաքել: Քայքայվեց ԽՍՀՄ-ը, և ուրիշ ժամանակներ սկսվեցին: Ազգը, շահելով պատերազմը, ինքնաընկալման և աշխարհընկալման մեկ համակարգից վերափոխվեց մեկ այլ համակարգի: Այդ վերափոխատավորումը ունեցավ հսկայական ծախսեր, և ես ուզում էի ամեն ինչ հասկանալ, ուզում էի օգնել ազգին գերծ մնալ ճակատագրական սխալներից: Գրեցի մի շարք ծավալուն աշխատություններ, որոնք մեծ հետաքրքրություն առաջացրին թե՛ Չայաստանում, թե՛ Սփյուռքում, թե՛ աշխարհում: Շատ հրատարակիչներ առաջարկեցին ավարտին հասցնել հայերի ինքնաճանաչողության մասին հոդվածներիս շարքը: Այդպես 1994 թ. լույս տեսավ իմ «Ժողովուրդը և պետությունը» գիրքը, իսկ երեք տարի անց՝ «Ազգային ինքնագիտակցությունը» գիրքը, որտեղ ես ցույց տվեցի՝ ինչպիսին են հայերն իրենց տեսնում կյանքում և պատմության մեջ, և ինչպիսին են նրանք իրականում: Նույնիսկ կարողացա ցույց տալ հայկականության կրողին: Այս գրքերից առանձին հատվածներ մինչև հիմա հրատարակվում և թարգմանվում են ինչպես Չայաստանում, այնպես էլ արտերկրում՝ առաջ բերելով ընթերցողների ակտիվ հետաքրքրությունը: Այս էստեում նույնպես շարունակում են աշխարհայացքային և աշխարհագրագական (ոչ կենցաղային և ոչ էթնոգրաֆիկ) փնտրտուքն այդ ուղղությամբ: Եվ դրա համար ես ընտրել եմ ոչ սովորական բովանդակություն և ձև:

1.

Աշխույժ և հետաքրքրասեր մարդկանց՝ ուրախ ժամանցների և հետաքրքիր փոխշփումների հանդեպ ակնկալիքները փաստորեն միշտ ճաշկերույթի խայծ են և կյանքի իմաստ: Չկա պարզապես հանգիստ, չկա պարզապես ուրախ ժամանց, չկա պարզապես կատակ և պարզապես բաժակաճառ. նույնիսկ պարզապես հայացքն արդեն ինչ-որ բան նշանակում է և ինչ-որ բան թաքցնում կամ զգուշացնում է, նախապատրաստում, հուշում, բացահայտում, պատմում... Չայկական սեղանի սյուժեն պարզ է և հասկանալի, նույնիսկ՝ մասամբ ուղղագիծ: Չկա ցուցադրական ոչինչ. այն մեծ մասամբ կախված է ճաշկերույթի բովանդակությունից, տանտիրոջից՝ այդ առատածեռն մարդուց, որն իր տանիքի տակ է հավաքել հայերի մի խումբ և տեղավորել նրանց մի սեղանի շուրջ: Այնուհետև կարևոր է անկեղծության տոնուսը, մի խոսքով, ճաշկերույթի որակը կախված է տանտիրոջ բարյացակամությունից և անկեղծությունից, այն մթնոլորտից, որտեղ հայտնվել են հյուրերը: Բնականաբար, հետաքրքրություն է առաջացնում նաև սեղանը՝ գայթակղիչ ձևավորած և սպասողական: Այն գտնվում է խնջույքի ընդգրկած տարածության կոմպոզիցիայի կենտրոնում՝ պահպանելով սպասումի գայթակղությունը... Պահուստում, պետք է ունենալ սպասք և աթոռներ. ինչ-որ մեկը կարող է առանց հրավերի անսպասելի այցելել, ինչ-որ մեկը գուցե իր հետ բերում է ընկերոջը, կամ մեկը գուցե դեռ կգա...

Հայկական ճաշկերույթը մարդկանց սահմանափակ ընկերություն չէ, այլ բաց, փոխհարաբերությունների ինչ-որ տեղ անվերջանալի շղթա: Պատահում է և այնպես, որ տվյալ ճաշկերույթի ժամանակ արդեն նախատեսվում է ևս մեկ կամ մի քանի խնջույք տեսանելի ապագայում: Դա վկայում է մասնակիցների կամ մի ամբողջ խմբի ցանկությունը՝ ևս մեկ անգամ միասին անցկացնելու ազատ ժամանակը. այսինքն՝ նրանց հաճելի է այդ միջավայրը: Եվ ահա, արագ ծանոթություններից հետո (եթե ինչ-որ մեկին ծանոթ չեն), որպես կանոն, առանց հատուկ ծիսակատարության, շարունակելով կատակներ, սովորական լուրեր փոխանակել, չմոռանալով գովաբանել (երբեմն թեթև հումորով) փոքրիկ երեխաներին և երիտասարդներին, հարգելով մեծերին, հայերը հանդարտ տեղավորվում են սեղանի շուրջ: Այդ պահից ճաշկերույթը փոխում է իր ռիթմը և հարաբերությունների մի համակարգից անցնում է բոլորովին այլ համակարգի, որտեղ խմելու, ուտելու, զգացմունքների և փաստարկների հետ մենամարտերից յուրաքանչյուրին հատկացված է որոշակի ժամաքանակ... Սկսվում է ճաշկերույթը: Բարձրացված է առաջին բաժակը, և առաջարկվում է խմել այս կամ այն կենացը, որի համար էլ այդ ամբողջ իրարանցումն է: Դրան հետևում է երկրորդ բաժակը՝ թանադայի ընտրության կապակցությամբ: Ծաշկերույթը դանդաղ և հաստատուն սովորական ընթացքի մեջ է մտնում: Այդ պահից սկսած՝ ավանդույթն է ղեկավարում ճաշկերույթը: Ժողովրդական ավանդույթը հենց միջին վիճակագրական մարդու համար է, նրա կյանքը թեթևացնելու համար: Այսպիսով, մեր ճաշկերույթը ղեկավարում է տիպիկ հայերի մի խումբ: Ամեն ինչ որոշում են հավաքված միջակները, այսպես կոչված՝ պնդակազմները՝ ազգային կացութաձևի բոլոր պարզունակ ավանդույթները հստակ յուրացրած և պահպանող: Այստեղ ամեն ինչ ծրագրավորված է, և ամեն ինչ իր տեղն ու արժեքն ունի, ինչն էլ հենց նրանք որոշում են, թեկուզ առաջին, մակերեսային հայացքից թվում է, թե նրանցից քիչ բան է կախված: Ինչպիսի մեծ, նշանավոր մարդիկ էլ գտնվեն նրանց շրջապատում, միևնույն է, նրանք են թելադրում սեղանի իմաստն ու բովանդակությունը: Նրանք հաճույքով կատակում են, խորամանկում (հաջող թե ոչ այնքան կարևոր չէ), գլխով են անում և հիացմունք արտահայտում, բայց իրենց ներսում արձանագրում են շեղումները բոլոր այն նորմերից, որոնք սուրբ են իրենց համար: Իսկ հարմար պահի (լինում են այդպիսի դադարներ ճաշկերույթի ժամանակ) իրենց սեղանակիցների՝ հայության նույնատիպ ներկայացուցիչների հետ նրանք քննարկում են տվյալ ճաշկերույթի նրբությունները:

2.

Հայկական խնջույքը այլ ժողովուրդների նմանատիպ միջոցառումներից նախ և առաջ տարբերվում է նրանով, որ հայկականը շատ էկլեկտիկ է նախ մասնակիցների կազմով: Միևնույն սեղանի շուրջ, որպես կանոն, կարելի է տեսնել թե՛ ուսյալ, թե՛ թերուս, թե՛ սակավ բարեկիրթ և թե՛ բարձր ինտելեկտով, հաջողակ և անհաջողակ, տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց՝ քաղաքացի և գյուղացի: Այսինքն՝ մարդկանց, որոնք չպետք է հայտնվեին միևնույն սեղանի շուրջ: Եզրակացությունը մեկն է. հայ հասարակությունը վերջնականապես ձեվավորված, կայացած հասարակություն չէ:

Ովքե՞ր են հայերը: Ինչպե՞ս է ազգային ինքնագիտակցությունն առանձնացրել նրանց այլ ցեղերից և ժողովուրդներից, և ինչքանով է այդ քայլն արդարացված: Հայ ժողովուրդը կենցաղով ավելի շուտ ասիացի է (ապրում է արևելքում), իսկ աշխարհընկալմամբ՝ եվրոպամետ. հիշենք Ա. Ֆրանսի խոսքերը. «... Դա մեր քույրն է արևելքում», ահա այդպիսի մեխանիզմն է նրան առանձնացրել շրջապատող աշխարհից: Նրա աշխարհագրագոյության մեջ բնակազմորեն հաշտ գոյակցում են աշխարհընկալման թե՛ արևելյան, թե՛ արևմտյան վեկտորները: Այդ յուրօրինակ համակցությունը, երկակիությունը, գուցե և փոխհամաձայնությունը, մենք ամեն ինչում տեսնում ենք: Թեպետ կենցաղում հայերը նաև արևմտյան տարրեր են ներառել, իսկ աշխարհընկալման մեջ՝ արևելյան հայացքներ: Ահա թե ինչու հայերի համար հեշտ է ցանկացած միջավայրում, ցանկացած երկրում հարմարվելը: Ահա թե ինչու ստեղծագործողները, թողնելով Հայաստանը, այդպես արագ հայտնվում են համաաշխարհային մշակույթի առաջին շարքերում (Եվրոպայում, ԱՄՆ-ում կամ Ռուսաստանում), իսկ գիտնականները հեշտությամբ յուրացնում և բացահայտում են հենքային գիտության և տեխնոլոգիայի նորանոր հորիզոններ:

Ինչո՞ւ են գրում այս ամենի մասին: Որովհետև խնջույքում դա ակնհայտ է, քան որևէ այլ տեղ: Կենցաղային հարաբերություններում, այսինքն՝ բարոյականությամբ և վարվեցողությամբ, հայը պահպանողական է. բավականաչափ պահպանում է անցյալը, ասիացի է: Արտաքնապես հայերն ամեն ինչ ընդունում են, տեսնելով նորը՝ նրանք արագ և ճշգրիտ վերլուծում են, սակայն ներքնապես գրեթե ոչինչ չեն ընդունում: Օրինակ՝ Լոս Անջելեսում, Մոնթեվիդեոյում կամ Մարսելում նա կիսավարտիքով է շրջում, ինչն իրեն թույլ չի տա անել հայրենիքում: Միջին հայը ունի մարդկային և կենսական արժեքների իր սանդղակը, իր բարոյական կողեքսը և ճաշկերույթի իր ընկալումը. թեպետ այդ ամենը լավ տեղավորվում է մտահորիզոնում և դրանից դուրս, ավելի շատ բարոյականի, նույնիսկ անգիտակցականի շրջանակներում:

3.

Այո, մի ամբողջ հազարամյակ իր պետականությունը կորցրած ազգը կարող էր գոյատևել միայն իր կյանքի ներքին ռեժիմի խիստ պահպանման և ընտրության պայմաններում: Նա իր ներսում ձևավորել է դասային երեք խումբ՝ վաճառականներ, արհեստավորներ և գյուղացիներ, նրանցից էլ հենց ծնվում է հայկականության կրողը՝ այդ միջին վիճակագրական հայը: Միաժամանակ նկատենք, որ հայերն այդ նույն հազարամյա ժամանակահատվածում կորցրել են ազնվականությանը, երևելիների դասին և ոչ միայն հին, այլև նոր ծնվող դասին: Նորաստեղծ ազնվականության հզոր սերունդը ձուլվում էր այլ ժողովուրդներին: Վառ օրինակ է Բյուզանդական Կայսրությունը: Ո՞ւմ հետ են սիրում հայերը սեղան նստել: Իհարկե, ազգականների, մտերիմների, բարեկամների, նշանավոր հայերի, դիրք և շահավետ գործարարական հատկանիշներով կապեր ունեցող մարդկանց, արվեստի մարդկանց, սիրունիկ կանանց, արտասահմանցիների հետ... Աստված գիտի՝ էլ ում հետ են հայերը նստում խնջույթի սեղանի շուրջ: Նշանավոր մարդկանց՝ խնջույթին մասնակցելը շոյում է ներկաների

ինքնասիրությունը, որը դարեր շարունակ անվերահսկելի գոյապահպանման ընթացքում խիստ ձևախեղվել է: Եվ եթե ինչ-որ բան էլ ուզում է հայն իմանալ հանրաճանաչ մարդու պատմածից, ապա առաջին հերթին այն, թե ինչքան է վերջինս սիրում հայերին և Հայաստանը: Հայը հաճելիորեն շոյված կզգա իրեն, եթե նա իր արմատներով լինի նույն վայրից, ինչ որ ինքը: Հետաքրքրությամբ և ինչ-որ տեղ թերահավատորեն է հայը լսում նշանավոր մարդու ստացած այս կամ այն պարզատրության մասին: Մյուս կողմից հայի համար նշանավոր մարդկանց սեղանակից անելը շատ կարևոր է՝ որպես ապացույց սեփական առաքինությունների, խորաթափանցության և խելամտության: Վերջիվերջո այն խոսքուզրույցի լավ նյութ է, և սրան միանում են ազգային բնավորության կարևոր բաղադրիչները՝ սուր ծաղրի հասնող հուճորը և միամտությունը: Ի հակառակ տարածված կարծիքի՝ հայերը բոլորովին էլ խորամանկ չեն:

4.

Ի՞նչն է ընկած հայկական ճաշկերույթի գործընթացի և զրույցի կոմպոզիցիոն կենտրոնում: Իհարկե, փոխադարձ շփումը, անկաշկանդվածությունը, ուրախությունը... Իսկ բաժակաճառերը կարգավորում են խնջույթի ռիթմը, իմաստ և բովանդակություն հաղորդում փոխշրփմանը: Թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում բաժակաճառերը, որպես կանոն, միանման են, տարբերվում են միայն ձևով և հնչերանգով: Սփյուռքում (այստեղ ապրում է ժողովրդի երկու երրորդից ավելին) դրանք հղկվում են տեղական սովորույթների, այլ մշակույթի ազդեցությամբ: Հատկապես շատախոս վրացահայերի խոսքը հարուստ է, գեղեցիկ այլաբանություններով և փոխաբերություններով: Նրանց գեղեցկախոսությանն ու աղուհացին սահման չկա: Բոլոր հայերն են աղուհացով, բայց հատուկ ուզում են մատնանշել իրանահայերին, բեյրութահայերին և սիրիահայերին: Եվ եթե իրանահայերը մեղմ են ու զուսպ, ապա բեյրութահայերը սիրում են աչքի ընկնել և դրանով հիշեցնում են թիֆլիսահայերին: Գյումրեցիներն ավելի սրամիտ են և հետևողական իրենց խնջույքների ավանդույթների հարցում: Գեղեցիկ են իրենց ավանդույթներով Հայաստանի բոլոր կողմերի հայերը՝ թե՛ լոռեցիները, թե՛ սյունեցիները, թե՛ սևանցիները, արտաշատցիները, արմավիրցիները, աշտարակցիները, դարաբաղցիները, ապարանցիները, ջավախքցիները և բոլոր մնացածները, որոնք այս ցանկում չընդգրկվեցին: Իսկ Հայաստանի ներսում գոյություն ունեն մաս Կանի, Մուշի, Կիլիկիայի, Սասունի և այլ հայերի համայնքներ (դա ակնառու է հատկապես Սփյուռքում), օրինակ՝ եթե վանեցիները լավ են պահպանել Կան քաղաքի սովորույթները և խոհանոցը, ապա սասունցիները՝ գյուղի ավանդույթները: Բաժակաճառերի մեջ ամենազուսպը կարելի է համարել Եվրոպայի, օրինակ՝ Փարիզի և Բրյուսելի հայերին: Սփյուռքում քիչ չեն մաս այն հայերը, որոնք նախընտրում են բաժակ բարձրացնել միայն հաճելիորեն ժպտալու համար: Ձևերի այդ հսկայական ցաքուցրիվության մեջ երևում է ազգի ամբողջ հակասական, ինչ-որ տեղ անբացատրելի կյանքը: Չէ՞ որ հայերը ձգտում են հնարավորինս հարմարվել օտար երկրում: Եվ դա նրանց հաջողվում է: Իսկ այդպիսի հարմարվողականությունը հանգեցնում է կամ ավանդույթների փոփոխության (երբեմն հարստացման, երբեմն անլացման), կամ ասիմիլյացիայի: Տարիների, տասնամյակների նոր սերունդները հների

փոխարեն բերում են նոր բաժակաճառեր, նոր սովորույթներ: Սակայն բոլոր ավանդական բաժակաճառերի հիմքում մնում է հաստատուն սերը՝ ծնողների, երեխաների, օջախի, հայրենիքի (որն աստիճանաբար վերածվում է միֆի) հանդեպ:

5.

Հայրենիք-միֆը (դա ևս մեկ ենթաթեմա է մեր մեծ թեմայում) գերակշռում է հայի գիտակցության մեջ: Նա համարում է, որ հայերի բախտը չի բերում: «Հայի բախտ», - ասում են հայերը և տխուր աչքերով նայում միմյանց: Տխուր աչքեր. սա ևս մի էջ է ազգային ինքնագիտակցության մեջ: Յուրաքանչյուր հայ Հայաստանը և հայ ժողովրդին աղետից կամ քաղաքական ասպարեզից անհետանալուց փրկելու մի քանի տարբերակների կրողն է: Իսկ պատճառը նույնն է՝ պետականության բացակայությունը: Սրանից էլ՝ նրա անբացատրելի անհանգստությունը և հանդուրժողականությունն այսօրվա Հայաստանի ներսում: Եվ այստեղից էլ՝ նրա անվստահությունը և արտագաղթը: Այնուհետև խանդոտ վերաբերմունքը երկրի հանդեպ, որից դուրս է մղվել հանգամանքների բերումով, դառնում է ազգի գոյատևման ուժեղագույն խթանը: Այո, յուրաքանչյուր հայ ունի հայրենիքի փրկության իր ծրագիրը, այո, նա «փոքրիկ Նապոլեոն» է: Մյուս կողմից, գործում է պատմական հայրենիքի առասպելականացումը, որտեղ միախառնված են իրականն ու երևակայականը, որտեղ բոլորը կարծես երազում լինեն, և որտեղ յուրաքանչյուր հայ ինքն իրեն համարում է փրկիչ և հերոս: Կարելի է միանշանակ ասել, որ յուրաքանչյուր հայ առասպել արարող է: Եվ դրանում նրան օգնում են նրա զգացմունքային պոռթկումները, որոնք ուժեղ են նրա պայմանական դատողությունից, բայց ոչ նյութական շահերից: Իսկապես, նրա զգացմունքայնությունը սեղանի շուրջ, երբ ամեն ինչ պատրաստ է, որպեսզի արտահայտի իր սերը կամ ատելությունը, դառնում է ուժեղագույն զենքը: Այդժամ նա մեղադրում է բոլորին և յուրաքանչյուրին հայրենիքի հանդեպ ցուցաբերած ոչ բավարար սիրո համար, ասես ինքն է սեփականաշնորհել այդ սերը: Եվ այդ ամենը նա տեղադրում է իր՝ զգացմունքայնությամբ հզոր, բայց միանգամայն տափակ բաժակաճառում:

6.

Հայկական սեղանի շուրջ հնչող բաժակաճառը նաև ազգային համակարգի ներսում տրվող ինքնատիպ գնահատական է յուրաքանչյուր հայի համար: Ի դեպ, որտե՞ղ պետք է հայը գնահատանքի արժանանար իր հայրենակիցների կողմից, եթե դարեր շարունակ չի եղել պետականություն: Ուրեմն՝ միայն այս բաժակաճառերում: Հայաստանում եթե արդար հասարակություն ձևավորվի, բաժակաճառերը կանհետանան, ինչպես ատավիզն: Թե՛ երեկ, թե՛ այսօր, թե՛ գուցես վաղը Սփյուռքում այդպիսի գնահատանքը դեռ էական կլինի: Դու կարող է ընդգրկված լինես պետական ծառայության կամ բիզնեսի մեջ, ասենք, Անգլիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում և այլուր, զբաղեցնես այնտեղ ակնհայտ բարձր դիրք, բայց դա դեռ ամբողջական գնահատականը չէ, կա նաև գնահատականի հայկական գործակիցը, որը կարող է գովասանք լինել կամ քամահրանք: Հայերը, որպես կանոն, չեն կարող անտարբեր կամ հավասարակշռված վերաբերվել:

7.

Այստեղից հետևում է ևս մեկ հարց. անաչա՞ռ են, արդյոք, հայերը: Այո և բավականաչափ իրատես: Բայց ոչ իրենց ազգային կյանքում: Հայաստանում և Սփյուռքում մեծ մասամբ նրանք իրենց համարում են ինչ-որ տեղ դժբախտ, խոցված և վիրավոր: Դա վերաբերում է ինչպես անհաջողակներին, այնպես էլ շատ հայտնի, հանրաճանաչ մարդկանց, որոնց կարիերան կասկածի տակ չի առնվում: Այդ ամենին ես ինքս եմ հետևել: Եվ ահա ճաշկերույթը կարող է նրան արժանացնել գնահատականի սեփական սանդղակին, որը կարող է լինել բոլորովին ոչ օբյեկտիվ, այն, սովորաբար, պայմանական է, իսկ երբեմն՝ բավականաչափ հումորով: Հայտնի է, որ եթե ազգային կյանքի, պետականության համակարգը կորցնում է արդարության գործակիցը, ապա ժողովուրդը և պետությունը ձևախեղվում են, տարանջատվում, անհետանում: Մենք չենք անհետացել, մենք ապրում ենք, բայց մեր հոգեբանության, մեր փոխըմբռնման ներսում քիչ թերություններ չկան, որոնք խանգարում են մեզ հասկանալ, գնահատել և ապրել սեփական ազգի, սեփական պետության ներսում: Ծիծաղելի է, բայց ճշմարտություն է՝ հայերն այսօր Սփյուռքում ավելի շատ հնարավորություններ ունեն, քան հայրենիքում: Չէ որ հնարավորությունների շուկայում հայերը օտար պետության և Հայաստանի ներսում սեփական խնդիրների միջև ընտրում են առաջինը: Ինչո՞ւ է այդպես: Չէ՞ որ հայրենիքում բնակչության ավելի քան 90 տոկոսը հայեր են, և դա պետք է մեր հաստատուն զարգացման երաշխիքը լիներ. մեկ մշակույթ, լեզու, սովորույթներ, կրոն, վերջապես ազգակիցների գերեզմանները... Ոչ քիչ քանակությամբ հեռանում են նաև գյուղացիները: Ի՞նչն է պատճառը: Միանշանակ, հայերը ո՛չ գաղափարների, ո՛չ մարդկանց ընտրության հարցում արդարացի չեն, ավելին՝ նրանց մեծ մասի մեջ գործում է անցած դարերի ախտանիշը՝ ես կարող էի: Նման եսակենտրոնության առկայությամբ չի կարող լինել մարդկային որևէ հատկանիշի խորը, ճշմարտացի գնահատական, դրանք բոլորն էլ ձևախեղված են ընկալվում: Դա վկայում է այն մասին, որ մենք դոփում ենք տեղում: Հետևաբար, հայերը իրատեսորեն չեն վերաբերվում իրականությանը:

8.

Ի դեպ, հայ ազգի բարյացակամությունը, անկեղծությունը՝ ցանկացած ուրիշ ժողովրդի հետ հարաբերության մեջ, բոլոր նրանց մեջ, ովքեր մոտիկից ծանոթ են մեր ազգին և ուսումնասիրել են նրա պատմությունն ու բնավորությունը, առաջացնում են անսահման հարգանք և ուրախություն: Սակայն դա անհանգստացնում է, նույնիսկ վտանգավոր է դառնում. լինել այդ աստիճան անկեղծ և բարի, նույնն է, թե լինել դիմադրողականությունից զուրկ:

9.

Ովքե՞ր են նստած սեղանի շուրջ: Ո՞վ է այդ միջին, տիպիկ հայը: Ես նրան անվանում եմ միջին բազմակողմանի մարդ կամ ինքն իր վրա հույսը դնող: Դարերի միջով նա գոյատևել է միայն այն պատճառով, որ ինքն իր վրա է հույսը դրել: Եվ այսօր նրա համար իշխանությունը այնտեղ, ինչ-որ տեղ է (ձեռքով ցույց է տալիս կողք կամ վերև), իսկ ինքը պետք է աշխատի և հոգ տանի ընտանիքի մասին: Նա օտարացած է իշխանությունից... Ինչո՞ւ է նա

միջինացված, և ինչո՞ւմ է նրա բազմակողմանիությունը, ինչո՞վ է նա տարբերվում ուրիշ ազգերի միջին ներկայացուցիչներից: Մի՞թե մյուս ժողովուրդները միջիններից կամ իրենք իրենց վրա հույսը դնողներից չեն բաղկացած: Հայը միջին օտարերկրացուց տարբերվում է նրանով, որ այն ամենը, ինչ նա ձեռնարկում է (իսկ նա շատ բան է ձեռնարկում, իր կանքը լինելով ամեն ինչին ձեռք կոցեր), կարող է անել ոչ վատ մակարդակով: Եվ առանց մասնագիտական կրթության: Կարելի է ասել, որ ծնվել հայ և մեծանալ հայկական միջավայրում, արդեն նշանակում է մի քանի մասնագիտություն ունենալ: Նրան կյանքն է թելադրում, կյանքն էլ հղկում է: Դա էլ հենց ազգային փորձն է: Գումարած դրան հսկայական պատմական գոյապայքարի փորձը (նա իր չափանիշներն ունի, ասենք՝ լինել հին ազգ, դա հրաշալի է, եթե այդպես է, ապա մենք ամենահինն ենք), այդ թվում նաև հոգեբանականը: Նա զրկված է եղել պետականության դիմադրողականությունից մի ամբողջ մռայլ և ողբերգական հազարամյակ, և նա ինքն իր վրա է հույսը դրել: Դա գենետիկա է: Բայց այդ գենոտիպը ինչպես անցյալում թույլ չի տվել, որ ազգը մեռնի, անհետանա, այնպես էլ այսօր խանգարում է նրան զարգանալ, սակայն նա բացարձակ մրցունակ է ցանկացած միջին այլազգու նկատմամբ... Միայն մարդկային այդ տեսակն է ազգի մեջ գոյատևել և դարձել ամեն հայկականի կրողը, ստեղծել է ավանդույթներ և ինքն էլ պահպանում է դրանք: Նա թելադրել և թելադրում է ազգի կյանքի ներսում տիրող եղանակը: Այդպիսով, միջինացված-բազմակողմանի հայը ոչ միայն ազգի ողնաշարն է, այլ նաև նրա միտքը: Ազգի մեջ նա երեք դաս է ձևավորել՝ գյուղացիություն, արհեստավորություն և վաճառականություն: Հազարամյակի ընթացքում ոչնչացրել է ազնվականականությանն ու երևելիների դասին: Պատմական փորձը վկայում է, որ հայերի համար, որոնք դարերի միջով գոյատևել են առանձին-առանձին, ավելի հեշտ է մեկնել այլ երկիր, քան միավորվել և կազմավորել նոր հասարակություն: Ահա թե ինչով է բացատրվում հայերի այդպիսի արտահոսքը ԽՍՀՄ փլուզումից ի վեր: Նա իրեն բազմակողմանի մարդ է համարում: Ճաշկերույթի ժամանակ նա մեղմ քննադատում և մեղմաբար ուշադրությամբ հետեվում է, ինՖորմացիա հավաքում, հետաքրքրվում ամեն ինչով, կարճ ասած՝ շատ հետաքրքրասեր է: Նրան հետաքրքրում են և խոշոր, վառ անհատականությունները ու ոչ միայն գործնականության տեսակետից... Այո, իհարկե, տիպիկ հայը ընդդիմախոս է:

10.

Իրական կյանքում հայը փնտրում է բազմակարող հայի (ինչպես ինքն է), իսկ այդպիսին, ինչպես հայտնի է, իրական կյանքում չկա: Մի անգամ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և Շվեդիայից Երևան ժամանած տնօրեններին և ուսուցիչներին նման խոսակցությունից հետո ես ասացի. «Ես ճանաչում եմ այն հային, որին դուք փնտրում եք: Նա ապրում է Երևանում»: Նրանք ուրախացան և խնդրեցին՝ եթե հնարավոր է, տանեն իրենց նրա մոտ: Ես ասացի, որ նրա մոտ կարելի է առանց նախազգուշացման էլ գնալ: Եվ մենք ուղևորվեցինք դեպի կայարանամերձ հրապարակ, որտեղ կանգնած է Սասունցի Դավթի արձանը: «Այն, ինչ դուք փնտրում եք իրական կյանքում, արտահայտել և մարմնավորել է ժողովուրդը. ահա նա»,- ասացի ես: Սկզբում նրանք շփոթված էին՝

չհասկանալով, թե ինչի մասին է խոսքը, հետո ինձ շնորհակալություն հայտնեցին այդ հետաքրքիր դասի համար:

11.

Եթե 2-3 բաժակաճառից առաջ միջակ հայր ինչ-որ տեղ ստվերում էր ճաշկերույթի ժամանակ, ապա դրանից հետո նա արդեն իրական տերն է սեղանի: Հիմա նա նորից իրեն ուժեղ է զգում, և հարկավոր է ընդամենը որոշ ժամանակ, որ նա բոլորի հանդեպ իր առավելությունը ցուցադրի: Եթե սեղանի մոտ հանրաճանաչ մեկն է՝ մեծ անհատականություն, ապա նրա մասին այսպիսի եզրակացություն կանի՝ «բայց նա բոլորովին էլ լուրջ մարդ չէ (կարծես թե վերջինս հրավիրված է, որպեսզի ոչ թե պարզապես կատակի և ուրախանա, այլ ցույց տա իր տաղանդը և կրթվածությունը) տես, թե ինչ հիմարություն է դուրս տալիս, հարբած է, ինչ-որ անհասկանալի բաներ է ասում, ծիծաղում...»:

Մի՞թե հայերը չեն սիրում հպարտանալ իրենց ազգի մեծերով: Սիրում են, այն էլ ինչպես: Բայց ինքնատիպ է նրանց սերը: Նախևառաջ նրանք չեն կարողանում գնահատել նրանց, դա պետք է անեն այլ մշակույթները, այլ երկրներն ու ժողովուրդները: Դրանից հետո ինքը՝ հայը, ամեն կերպ կծգտի մոտենալ, շփվել, թեկուզ օրինակ լուսանկարվել այդ մարդու հետ: «Ահա հանրաճանաչ Ազնավուրը, իսկ կողքին ես եմ», «Սա մուլտիմիլիոնատեր Ալեք Մանուկյանն է, իսկ սա՝ ես», «Այս փոքրահասակ մարդը (ցույց տվողը հանդուրժողաբար նայում է հետաքրքրվողին) ժամեսեն է՝ ֆրանսիական ակադեմիայի անդամ...Նա այնքան համեստ է... Ո՞վ է նա: Դե կներեք՝ մեծ նկարիչ է»: Ժամեսենը, իհարկե, համեստ է, համե՞ստ է արդյոք մեր հերոսը՝ հարց է: Ինչպես նախնիներն ասում են. «Ուզում ես, որ քեզ սիրեն՝ մեռիր»: Հայերն էլ ունեն նմանատիպ արտահայտություն՝ «Գնա մեռիր՝ արի սիրեն»: Կան նաև նշանավոր հայեր, որոնք, իրենց վիրավորված զգալով, մոտ չեն թողնում հայրենակիցներին՝ ասելով. «Որտե՞ղ էիք այն ժամանակ...»: Մասնավորապես այդպես է արտահայտվել Անրի Թրուայան, որը մինչ այսօր անուշադրության է մատնում հայերին: Այդ պահերին միջին-բազմաշնորհի հայը, այլ կերպ՝ հայկականության կրողը խոժոռում է հոնքերը, թափ է տալիս ձեռքերը, ցածրաձայն դեպի կողք հայիոյուն և վերջում հայտարարում իբր. «... հայերին այդպիսի շուռտվածները պետք չեն»: Իսկ խնդրի շուրջ չի էլ ուզում խորհել ու ոչ մի եզրակացություն չի անում: Եվ, ուշադրություն դարձրեք, նա արդեն խոսում է բոլոր հայերի անունից, ժողովրդի անունից: Այս ամենը թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից կրում է Եղեռնի հետքը կամ ախտանշանը: Հայը սիրում է սեղան բացել գիտության, մշակույթի և սպորտի ներկայացուցիչների առաջ, բայց չի սիրում ֆինանսներ ներդնել նրանց զարգացման համար: Նա միայն հովանավորում է մշակույթի կամ սպորտի, ավելի քիչ՝ գիտության բնագավառի իր նման մի միջակի: Նախ այդ միջակը իր ինտելեկտին մատչելի և հասկանալի է, և հետո, որ ամենակարևորն է, առանձնապես շատ միջոցներ չեն ծախսվում, իսկ ինքնասիրությունն արդեն շոյված է: Պետք է նշեն, որ Հայաստանի պատմության մեջ չեն հիշում մի դեպք, որ տաղանդավոր հայ ստեղծագործողը՝ լինի դա գրող, դրամատուրգ, դերասան թե՛ նկարիչ, երաժիշտ թե՛ ճարտարապետ, բարեկեցիկ ապրի: Հատկապես, որ հարստանա: Իհարկե, կարող են մատնանշել, օրինակ, Վ.

Սարոյանին, Ա. Խաչատրյանին, Ազնավուրին կամ Գառզուին, Լ. Ամարային, Աղասիին, Ա. Պրոստին, Գ. Շլոյանին, բայց չէ՞ որ նրանք հարստացել են ոչ հայկական փողերի հաշվին և հանրաճանաչ էլ դարձել են հայկական մշակույթից և կյանքից դուրս: Եվ ինչպես հայտնի է ուրիշի փողերով ազգային մշակույթ չես ստեղծի:

12.

Ինչի՞ մասին է ընթանում խոսակցությունը ճաշկերույթի ժամանակ, բացի հնչած թեմայից: Ամենից առաջ հետաքրքիր է խոսակցության ենթատեքստը: Հայերը, ինչպես կյանքում, այնպես էլ հավաքույթների ժամանակ, չեն կարող իրենց զգացմունքներն ու մտքերն արտահայտել առանց ենթատեքստի: Իսկ ենթատեքստն այսպիսին է. «Իսկ ես ամեն դեպքում քեզանից խելոք եմ...» կամ «Դե, ես դա գիտեմ...», «Ի՞նչ ես դուրս տալիս» կամ «Խելոք է գտնվել, որոշել է հիմարի տեղ դնել բոլորին...», կամ՝ ավելին. «Ուզո՞ւմ ես քո պատմածին մի քիչ էլ ես ավելացնեմ, սա էլ և մի քիչ էլ վրան դնեմ...»: Ենթատեքստի բոլոր այս նրբերանգները բացատրելի են. պետականություն կորցրած յուրաքանչյուր հայ միայն իրեն է վստահում, միայն սեփական հոտառությանը, փորձին, խելքին և ինտելեկտին, որը ծայրեծայր ներծծված է գոյապայքարի տոհմական փորձի գործնական իմաստությամբ: Եվ թող ոչ հային տարօրինակ չթվա, եթե նա իրեն բռնի այն մտքի վրա, որ հայերի ցանկացած զրույց ենթադրում է ենթատեքստ՝ «Իսկ ես քեզանից խելոք եմ»: Դա այն լակմուսի թուղթն է, որով հայը ստուգում է ինքն իրեն: Հիմա, թե ինչի մասին է խոսում հայը: Ավելի հաճախ նրանք կենտրոնանում են որևէ խնդրի, որևէ թեմայի վրա՝ Հայաստանի վերջին նորությունների, հայության ճակատագրի, Հայաստանի պատմության կամ աշխարհում, որևէ երկրում, տվյալ քաղաքում տեղի ունեցողի մասին, եթե ճաշկերույթը Սփյուռքում է՝ նաև համայնքի խնդիրների մասին. խոսակցության թեմա են նաև անձնական խնդիրները՝ ավելի հաճախ միջանկյալ ձևի մեջ, օրինակ՝ ինչ-որ մեկի մահը, համալսարան ընդունվելու հարցը, ինչ-որ մեկի մեկնումը, մեկի ֆինանսական, սպորտային կամ այլ բնագավառում հաջողությունը կամ անհաջողությունը և այլն: Երբեմն կենտրոնանում են կոնկրետ մի մարդու վրա. թեպետ կարող են զրուցել ամեն ինչի մասին, քանի որ հավաքույթը բաղկացած է բազմաշերտ հասարակությունից: Լինում է և այնպես, երբ խումբը ինքնաբերաբար ընտրում է որևէ մեկին որպես թեթև կատակների և ծիծաղի թիրախ: Ավելի հաճախ պատահում է, որ հրավիրվածն ինքը հայտնի կատակաբան է և զվարճախոս: Հայերը սիրում են շուտ հարբող՝ սովորաբար մոտ մարդուն ձեռք առնել: Սեղանի շուրջ խոսակցության ժամանակ, ուշադրություն դարձրեք, ցանկացած նախադասություն հայը սկսում է ժխտումով՝ «Ոչ...», եթե նույնիսկ վերջիվերջո համաձայնի արտահայտված կարծիքին: Ինչո՞վ բացատրել դա: Ավելի շուտ՝ սովորությամբ: Չէ՞ որ խմիչքը սրում է զգայունակությունը... Նման ներքին անհանդուրժողականությամբ հանդերձ՝ ի՞նչն է հայերին միավորում: Առաջին հերթին պատմական, զգացմունքային եղբայրությունը, ազգակցական կապերը, մշակույթը: Եվ, որքան էլ տարօրինակ թվա, կորուստն ու ցավը, եղեռնի անմոռաց հուշը, գերազնիվ զսպվածությունն ու արիությունը, ինչպես և ժամանակի առաջադրած դժվարություններն ու խնդիրները: Ես քիչ չեմ

հանդիպել, այսպես կոչված, «թաքնված հայերի»՝ մասամբ կամ ամբողջովին ձուլված երիտասարդների և ծերերի, որոնք ազգի գիրկն են վերադառնում հայ ժողովրդի առջև ծառայած խնդիրների և դժվարությունների պատճառով: Նրանք գալիս են, որպեսզի օգնեն: Այդպես էր 1988-ի սարսափելի երկրաշարժի ժամանակ, այդպես է և հիմա. հարյուր-հազարավոր երիտասարդներ կամավոր ջոկատներ են կազմում, տարբեր երկրներից գալիս Հայաստան հաճախ ծանոթ չլինելով ոչ լեզվին, ոչ մշակույթին, տարօրինակ, ոչ հայկական անուն-ազգանուններով, որպեսզի անշահախնդրորեն օգնեն ցեղակիցներին իրենց պատմական հայրենիքում: Դա է մեր ապագան, մեր նոր սերունդը:

13.

Եվ այսպես, մի փոքր ամփոփում: Ստացվում է, որ հայերը շատ զգացմունքային ազգ են: Բայց այդ դեպքում ինչպես են նրանք, ասենք, առևտրի մեջ հասել նշանակալից արդյունքի: Հայերի մեջ անկեղծ զգացմունքային պոռթկումը զուգակցվում է զարմանալի խոհամտությամբ: Լինելով Արևելքն ու Արևմուտքը սինթեզող ազգ՝ նրանք խորը ներքաշել են իրենց մեջ աշխարհի շատ ժողովուրդների հոգեբանական դիմանկարը: Նրանց փորձը սթափ է և ճշգրիտ, միաժամանակ ուղղված չէ ի վնաս որևէ մեկի: Ընդհակառակը, այդ փորձը օգնում է արևելյան ժողովուրդներին ներարկել իրենց մեջ արևմտյան քաղաքակրթության լավագույն հատկանիշները, իսկ Արևմուտքին օգնում է ճիշտ ընկալել Արևելքը: Այստեղից էլ՝ այդպիսի ճաշկերույթը՝ ոչ ամբողջովին արևելյան, ոչ էլ ընդգծված արևմտյան: Թեպետ որպես արևելցիներ՝ հայերը սեղանի շուրջ փիլիսոփայում են ամեն ինչի շուրջ, և այդ կենցաղային իմաստնությունը, ինչպես սևեռուն երագ, հետապնդում է ամենուր:

Հավանաբար, ազգի ողբերգական պատմությունն է պարտադրել այդպիսի բնական ընտրություն. նույնիսկ մեզ հասած ազգային ճաշատեսակները շատ խնայողական են, չափազանց հարմար, այսինքն՝ կարող են կուշտ կերակրել, երկար պահպանվել, հեշտությամբ տեղից տեղ փոխադրվել և այլն: Հայերի ազգային կյանքը, բաց լինելով (այն ի ցույց է դրված այն բազմաքանակ ժողովուրդներին, որոնց մեջ ապրում են հայերը), մնում է հանելուկային: Շատերն են հայերին խորամանկ համարում, ես կարող եմ պնդել, որ գոյապայքարի հսկայական փորձի գործադրումն է ընկալվում որպես խորամանկություն: Դեռ 1816 թ. Բայրոնը դիպուկ նկատել է, որ «հայերը չեն չարացել կյանքի հանդեպ՝ չնայած իրենց երկրի ողբերգական պատմությանը»: Իսկապես, իրենք՝ հայերը, շատ են տարվում ուրիշ ժողովուրդների նոր գաղափարներով... Թող տարօրինակ չթվա՝ հայերը շատ ռոմանտիկ են, թեպետ և սիրում են թախծոտ երգեր... Արտաքին եսակենտրոնությամբ հանդերձ՝ նրանք բարյացակամ են և միատեսակ հարգանքով են վերաբերվում այլ ժողովուրդների սովորույթներին ու առանձնահատկություններին: Ահա թե ինչու նրանք սրտալից ընդունելության են արժանանում բոլոր այն ժողովուրդների կողմից, որոնց հետ ապրում են (այդ մասին դիպուկ գրում է Ի. Կանտը): Օտարերկրացին հայի սեղանի շուրջ իրեն միայնակ չի զգա: Հայերի սեղանի շուրջ կանայք և տղամարդիկ միշտ էլ հավասար իրավունքներ են ունեցել, նույնիսկ համաշխարհային և ազգային պատմության ամենամռայլ

ժամանակահատվածներում: Ասենք՝ օսմանյան տիրապետության շրջանում այդ հավասարությունը տարբեր ձևեր է ընդունել: Նայեք 20-րդ դարասկզբի մեր ազգային տարազին և կտեսնեք նրանցից ամենահինը (անտիկ ժամանակաշրջանից եկած էրզրունյան կամ Ախալցխայի)՝ Եվրոպայում ուղղակի հայկական անվանվողը, նրբագեղ է, շատ կանացի և աշխարհին ի ցույց: Կանացի այդ զգեստը ընդգծում է մարմնի գիծը, հարուստ է մեծ ճաշակով ձևավորված թանկարժեք քարերով և ոսկյա նուրբ զարդանախշերով (էրզրունյան հանրահայտ ֆիլիգրանը՝ դեռևս 19-րդ դարի Փարիզի և Չիկագոյի համաշխարհային ցուցահանդեսներում բազմիցս ոսկի շահած): Ահա պատմությունից մի օրինակ. տեսնելով, թե ինչպես են իրեն՝ այրիացած կայսրուհուն, դիմավորում ախալցխացի կանայք և աղջիկները՝ Մարիա Ֆյոդորովնան բացականչեց. «Սա ոսկե քաղաք է՝ մուգ կարմիր ծաղկից շինված»:

Հայուհին հազվադեպ է բաժակաճառ ասում սեղանի շուրջ: Ոչ թե նրա համար, որ արգելվում է նրան արտահայտվել, կամ ոչինչ չունի ասելու, այլ որովհետև ընտանիքում խոսացածն ու մտածածը կարտահայտի ամուսինը: Իսկ իրեն հետաքրքրում են կանացի գաղտնիքները, երեխաների չարածճիությունները: Եթե ուզում եք իմանալ, հենց կինն է հայկական օջախի հիմքն ու հարստությունը: Բարոյական մթնոլորտը ընտանիքում. հայերն ասում են. «Կնոջ համար մեկ տղամարդը շատ է, երկուսը՝ քիչ»: Ընտանիքի կառուցվածքը. կինը և տղամարդը ընտանիքի երկու գլխավոր, հավասարաբեռ բաղադրիչներն են (այդ կանոնը գործում է հասարակության բոլոր ենթաշերտերում), նրանց անելիքները տարբերակված և հաստատված են դարերում: Հենց ընտանիքն է հայի համար դարեր շարունակ եղել և այժմ էլ մնում է որպես Հայրենիք, որտեղ կենտրոնացված են բոլոր բարոյական հիմքերը, որտեղ արդեն ձևավորված է հարաբերությունների և ընտրասերման կառուցակարգը: Այսպիսով, հայ ժողովուրդը ստեղծել է ևս մեկ բազմաբնույթ մոդել (հավանաբար ամենակատարյալն աշխարհում)՝ ընտանիքի մոդելը: Ոչ տղամարդը, ո՛չ էլ կինը իրականում չունեն և չեն կարող ունենալ ընտանեկան հարաբերությունների շրջանակից (որի մեջ կարող են մտնել մշակութային, ազգակցական, բարեկանական, գործնական, նույնիսկ հասարակական, բարեգործական և այլ գործառույթներ) դուրս հետաքրքրություններ: Եթե դրանք ինչ-որ կերպ խախտվում են, նշանակում է տվյալ ընտանիքում ճգնաժամ է սկսվել:

14.

Չկա մի ժողովուրդ, որն իրեն հյուրասեր չհամարի, միայն թե հյուրասիրության ձևերն ու բովանդակությունը տարբեր են: Հայկական ընտանիքը հյուրընկալ և դռնբաց է նոր ծանոթությունների առջև: Դրական զգացմունքների առատությունը անկեղծ ուրախությամբ է պարուրում հյուրին հայի տանը: Ճիշտ է, տանտերերը երբեմն հոգնեցնում և ձանձրացնում են, բայց մեծ մասամբ արժանապատվորեն են կատարում իրենց պարտականությունները, հեշտությամբ և պատասխանատվության ու սիրո մեծ զգացումով: Սեղանի շուրջ տանտերն առանձնանում է, բայց չի իշխում: Նրա ներկայությունը հյուրերն ավելի շատ զգում են, քան տեսնում: Հայկական խնջույքի երաժշտությունը... Չէ՞ որ հայոց լեզուն ինքնին

ազնվագեղ է իր հնչողությամբ: Հայի ունկը շատ նրբազգաց է, այն ընկալում է շատ հնչյուններ, որոնք չեն լսում ուրիշ ժողովուրդները: Հայերեն խոսքը բազմաշերտ է ինչպես բնության ընկալման, այնպես էլ մարդու հնարավորությունների մեջ: Հայոց լեզուն, հայի կոկորդը և հայի ունկը վեհորեն ընդունել և գտել են բնության շատ ներդաշն ձայներ՝ ստեղծելով հնչյունների զարմանահրաշ ներդաշնակություն: Հայերի լեզուն պահպանել և նրբանկատորեն հղկել է կոշտությունն ու ուժը, քնքշությունն ու թրթիռը և բնության ձայների այլևայլ նրբերանգները՝ միաժամանակ հաղորդելով դրանց մարդկային զգացմունքների և մտքերի բազմաշերտ իմաստը: Իսկ ճաշկերույթների ժամանակ հայերը սովորաբար թախծոտ, տխուր երգեր են երգում: Նրանց դեմքերը փայլում են խաղաղարար և մեղմ երջանկության յուրահատուկ լույսով: Հայերը ազգային մշակույթի ներսում ստեղծել են թախծի և տխրության մի ողջ մշակույթային մայրցամաք: Յուրաքանչյուր հայի սրտում տխրության և թախծի երգերը հատուկ տեղ են գրավում: Դա էլ իր բացատրությունն ունի. ազգի ողբերգական պատմությունը: Ազգային այդ երգերը տխուր են, միաժամանակ շատ լուսավոր, շատ ազնվագեղ և համեստ: Դրանցից շատերը տեխնիկապես դժվարկատարելի են, զուցե այդ պատճառով էլ սեղանի շուրջ երգվում են միայն այն երգերը, որոնք ունեն ընդգծված մեղեդի: Ու այդ երգերը դուրս են հորդում հայի հոգու խորքից, և ներկաները շունչները պահած լսում ու ըմբռնվում են ձայնը՝ ազատագրվելով ունայն հոգսերից, ինչպես ընդունված է հայկական սեղանի շուրջ: Կան և աշխույժ երգեր, նույնիսկ չարաճըճի և ակնհայտ սեթևեթող, բայց դրանց շատ քիչ տեղ է տրվում ճաշկերույթի ժամանակ: Հանճարեղ Կոմիտասն ասում էր. «Դուդուկը հենց հայկական ձայնն է»: Հայերը խնջույքներում գործածում են ինչպես ազգային գործիքներ (ասենք՝ զուռնա, թառ, ուդ, շվի...), այնպես էլ դաշնամուր, ջութակ, կլառնետ և այլն: Բայց միայն դուդուկի՝ դարերի խորքից եկող, հայոց դաժան ճակատագրի կնիքը կրող տխուր և մեղմ ձայնն է հուզում ու տակնուվրա անում հայի հոգին աշխարհի ցանկացած կետում: Խոսենք ևս մեկ առանձնահատկության մասին. խոսակցական հայերենում բացակայում են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «ինձ թվում է», «հնարավոր է», «կարող է պատահել», «կասկածում եմ», «կփորձեմ հասկանալ» և այլն: Երբ տարիներ առաջ ես Հայաստան եկա մշտական բնակության, իմ վերաբերմունքն արտահայտում էի հենց նմանատիպ արտահայտություններով, և շատերին թվում էր, որ ես չգիտեմ, չեն հասկանում, կասկածում կամ խորամանկում եմ: Եվ աստիճանաբար Երևանն իմ մեջ ներարկեց ազգային թերությունները: Դա էլ է հիանալի արտահայտված խնջույքներում: Այն պահանջում է հստակություն և պարզություն: Օրինակի համար՝ հայերը ամենակարևոր խնդիրները սկսում են քննարկել միայն այն բանից հետո, երբ սկսում են հարբել, և ճաշկերույթի կիզակետին կարևորագույն հարցերը քար կտրած կանգնում են արդեն բավականին հարբած քեֆչիների առջև, և նրանք այդ հարցերը շրջանցում են, ինչպես կարողանում են:

Թեպետ իրականում դրանք նորից կհառնեն ինչպես ուրվականներ: Իսկ մեր միջակ հայը միշտ էլ հաղթանակած դուրս կգա. «Չէ՞ որ ինքը զգուշացրել էր...»: Հարգանքը սեղանի շուրջ միշտ էլ հոգատարորեն խնամվում է, ինչպես վարդի գեղեցիկ թուփը: Թեպետ երկարաշունչ գեղեցկախոսությունը կարող է

թոշնեցնել այդ նուրբ ծաղիկները: Հիշո՞ւմ են, արդյոք, հայերը երեխաներին ճաշկերույթի ժամանակ: Եթե՝ այո, ապա որտե՞ղ են նրանք՝ իրենց ծնողների, բարեկամների արժանիքների այդ ամենադիպուկ գնահատողները, ավանդույթի այդ ժառանգորդները: Որտե՞ղ են այդ խոշոր, միամիտ և երազկոտ աչքերը, որտե՞ղ է նրանց քննախույզ հայացքը, նրանց քրքիջն ու ղժղժոցը, նրանց քմահաճություններն ու լացը, անհամբերությունն ու համբերությունը միաժամանակ, նրանց ագրեսիան և զիջողականությունը, կարճ և տարողունակ հիշողությունը: Չէ՞ որ երեխաների համար հենց մեծերն են ապագայի հիշողությունները: Մի՛ անհանգստացեք, նրանք այստեղ են՝ նրանց կողքին. փոքրերը անընդհատ քուն են մտնում և ծանոթանում են, պատանիներն ու երիտասարդները արդեն ձգտում են իրենց համար տեղ գրադեցնել սեղանի շուրջ: Ավելի մեծերն արդեն իրենց երեխաների հետ են. նրանք ուշադիր հետևում են բաժակաճառերին և առիթը բաց չեն թողնում ցույց տալու հռետորի իրենց տաղանդը: Դա արդեն նշանակում է, որ ավանդույթը ճիշտ ճանապարհի վրա է, որ այն չի ընդհատվի, որ ևս մեկ սերնդի վրա մենք կարող ենք հենվել այնպես, ինչպես ինքներս մեզ վրա: Բայց ես փոքր-ինչ տխուր եմ. այս ամենի մեջ ավելի շատ մեխանիկական կրկնություն կա, քան թե իրական խորհուրդ:

15.

Հայտնի է, որ «... բոլոր կենդանի էակներից միայն մարդն է զարդարում իր զոհերի դիակները՝ ախորժակ գրգռելու համար»: Հայերը ուսումնասիրել, փորձել են հասկանալ իրենց շրջապատող բնությունը և արել ամեն ինչ, որպեսզի նրա պտուղները ծառայեն իրենց որպես համեղ և օգտակար սնունդ: Այդ հարցում շատ բանի է հասել ազգը, թեպետ բավականին ճաշատեսակներ վաղուց մոռացվել են: Ամենակայուն հիշողությունը, երևում է, համայինն է: Հայերը երկարակյաց են, դա անհերքելի է, հենց այդ մոտեցումն էլ առկա է դաստիարակության, կյանքի ռիթմի մեջ և սննդի հանդեպ: Բուսական սնունդը (հատկապես կանաչեղենը) ամենացանկալին և ամենակարևորն է սննդակարգում, թեպետ այսօր ավելի տարածված են մսով կերակրատեսակները՝ խորովածը, խաշլաման, լուլա-քյաբաբը, տոլման, խաշը, քյուֆթան... Բնականաբար, սրանով չի ավարտվում, ավելի ճիշտ՝ սկսվում է մսով կերակրատեսակների երկար ցանկը, իսկ թվարկվածներն էլ ունեն իրենց տարատեսակները՝ մեկը մյուսից շատ տարբեր: Օրինակ՝ էջմիածնի քյուֆթան և պարզապես քյուֆթան, դրանք խիստ տարբեր ճաշատեսակներ են և՛ պատրաստման տեխնոլոգիայով և բաղադրիչներով: Կամ տոլման. այն կարող է լինել թփով, բանջարեղենով կամ կաղամբով և տխով: Իսկ լցոնը կարող է լինել ինչպես մսով, բրնձով և համեմունքներով, այնպես էլ պարզապես բրնձով և չամիչով: Եթե առաջին դեպքում այն մատուցվում է տաք վիճակում, ապա երկրորդ դեպքում՝ սառը: Ձկնեղենից հայերը նախընտրում են գետի ձուկը, Սևանի իշխանը և վերջին տասնամյակում Լադոգայից Սևան ներմուծված սիգը: Ձուկը կարող է մատուցվել ինչպես տաք, այնպես էլ սառը վիճակում՝ թե՛ որպես առաջին կերակրատեսակ, թե՛ որպես երկրորդ, կամ որպես խորտիկ: Սեղանի վրա առատ պետք է լինեն մրգերը և բանջարեղենը, անկասկած, նաև կանաչեղենը, որոնք ոչ միայն զարմանալի նուրբ, հաճելի բույր ունեն, այլև օգտակար են. հեշտացնում են դժվարամարս մսով կերակուրների

մարսողությունը: Դեռևս 19-րդ դարավերջին պարսիկները՝ բուսական սնունդի ամենամեծ սիրահարները, ասում էին, որ երևանցիները ավելի շատ բան են հասկանում խոտերից, քան դերվիշը ճանապարհից: Ի դեպ, բուսական սնունդի մի զգայական հատված այսօր դուրս է մնացել խոհարարների տեսադաշտից, և իզուր: Սառը ուտեստները սեղանին պետք է լինեն. պարտադիր ուտեստների մեջ պետք է լինի տնական պանրի տեսականի: Վստահ կարելի է ասել, որ պանիրը հայկական սեղանի նվագավարն է, նա մարդու ամենասթափ և ամենաառաջին օգնականն է:

Չեմ կարող հիացնունքս չարտահայտել հայկական հացի հանդեպ: Լավաշը հայերի ևս մեկ բազմահրաշ ստեղծագործությունն է՝ օժտված նուրբ համային հատկանիշներով, զարմանահրաշ, ինչպես իր պարզությամբ, այնպես էլ բազմաբովանդակ գործառնությամբ: Արդեն շատ հազարամյակներ է, ինչ լավաշը հայերի համար ավելին է, քան հացը. այն և՛ հույս է, և՛ առողջություն (օրինակ՝ լավաշից չեն չաղանում), և՛ սեղան, և՛ ափսե, և՛ խուրջին, և՛ չափանիշ ինչպես ուտելիքի, այնպես էլ դաստիարակության մեջ, և՛ տուն, և՛ հայրենիք: Ոչ ոք դեմ չի նետի լավաշի փշուրն անգամ: Հասկանալի է, թե ինչ հրաշք է լավաշը. այն երկար կարող է պահպանվել և չկորցնել իր համային և մյուս հատկանիշները: Ես այն չեմ նկարագրի, այն պետք է տեսնել և համոտեսել: Մյուս հայտնի հացատեսակներից չի կարելի չնշել մատնաքաշը և բոքոնը: Եթե մատնաքաշը այսօր շատ տարածված է, ապա բոքոնը գրեթե անհետացել է հայկական կենցաղից, և միայն գյուղերում են պահպանել այս հացաբլիթի պատրաստման բաղադրատոմսը:

Ինչպիսի՞ն է ճաշկերույթը Սփյուռքում: Խիստ տարբեր: Թերևս միայն Ռուսաստանում են հայերը բավականաչափ պահպանում ժամանակակից Հայաստանի ճաշկերույթի ավանդույթները, այն դեպքում, երբ Հայաստանն ինքն արդեն երկու դար է, ինչ ինքն էլ կրում է Ռուսաստանի ազդեցությունը: Պարերը... Դրանք խնջույքի հատուկ ուրախությունն են: Դա այն ուրախությունն է, որ ինքն է իր համար տարածություն հարթում ազատ, անկաշկանդ ժամանցի համար: Հայերը սիրում են պարել, բայց լավ չեն տիրապետում պարին՝ ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք: Եվ այն, ինչ այսօր խնջույքի ժամանակ ցուցադրում է մեր ժամանակակիցը (հատկապես տղամարդիկ), բառերով դժվար է նկարագրել: Ցավոք, պարը նույնպես ձևախեղվում է...

Հայերը շատ են սիրում թեյի և սուրճի սեղանի շուրջ հավաքույթները: Երբ բացակայում է կամ գրեթե չկա խմիչք, փոխարենը սեղանը զարդարում են շքեղ խմորեղենը (ազգային թխվածքաբլիթներ, տորթեր), նուշը, ընկույզը, պնդուկը, չամիչը, համեղ չրերը՝ ծիրանաչիրը, ընկույզի միջուկով ծիրանի շաքարաչիրը, պաստեղը և այլն: Սեղանը, որպես կանոն, ձևավորված է չափի մեծագույն զգացումով. չափից դուրս լցված չէ, բայց հրապուրում է և ոչ թե վանում, քանզի այն խստաբարո և ամբարտավան չէ, ինչպես ուրիշ ժողովուրդների մոտ: Ի դեպ, հայկական սեղանի տեսքը և՛ թափփված չէ, և՛ աչք չի ծակում, և ցցուն չէ այս կամ այն ուտելիքով. այն ամբողջ հոգով է ձևավորված, հյուրի հանդեպ սիրով ու անկեղծ վերաբերմունքով և նրբաճաշակ: Այդ ամենն արտացոլված է թե՛ սեղանի ձևավորման, թե՛ տանտերերի հոգեբանական տրամադրվածության մեջ:

Ուսումնասիրելով կենցաղային առարկաները՝ ես նկատեցի, որ

մտավորականությունը, այսինքն՝ հայ հասարակության բարձրակիր խառնվածքը, 19-20-րդ դարերի կեսերին թեյի կամ սուրճի սեղանի շուրջ (որոշ ժամանակահատված շատ մոդայիկ էր նաև կաթով կակաոն) սովորաբար օգտագործել է քիչ քանակությամբ լիկյոր կամ տնային պայմաններում պատրաստված որևէ նրբահամ խմիչք, օրինակ՝ վարդի տերևներից պատրաստված: Նման սեղանների շուրջ զրույցները եղել են անշտապ, ոչ երկար, բայց շատ հետաքրքիր և բովանդակալից: Գյուղական ճաշկերույթները հետաքրքիր են նաև նրանով, որ բացի վերը թվարկվածներից կարող է մատուցեն մեծ թասերով սառը, շատ համեղ և թարմացնող թանձրուկ՝ մածուն, ցանցով մեղր, թթվի որոշ տեսակներ՝ գյուղին բնորոշ, նաև չորացրած սերուցքի ոչ մեծ դեղին շերտեր: Այսօր հայկական ճաշկերույթին նախընտրում են լավ օդի, որը գրավեց գինու տեղը հավանաբար սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից: Ռուսաստանի հետ սերտ կապերը դրանում մեծ դեր խաղացին, ինչպես և թթվի որոշ տեսակների հարցում, օրինակ՝ վարունգի և կտրտած կաղամբի: Յուրի հանդեպ հարգանքի ամենամեծ արտահայտությունը համարում են թթօղին, ցորենի և հոնի օղին, որոնք ունեն 80 աստիճանից ոչ պակաս թնդություն: Այդպիսի մաքրագույն օղու մասին խոսում են որպես դեղի: Լավ հայկական ճաշկերույթ է համարվում, երբ լավ կերել են, խմել, բավականին արտահայտվել ազգային գաղափարների շուրջ, որոնք սկսվող օրվա հետ չվում են... մինչև հաջորդ ճաշկերույթ: Հայաստանը հազար տարի շարունակ եղել է գինու երկիր. նույնիսկ էրեբունի արքայական ամրոցի կարասներում (3 հազար տարի առաջ) են պահել գինի: Բայց այսօր քիչ են լավ հայկական գինիները: Ինձ անձամբ դուր է գալիս Արենի գինիների տեսականին՝ հատկապես տնային պայմաններում պատրաստված: Կարմիր և սպիտակ գինիները հավասար տեղ ունեն սեղանին: Հայկական կոնյակով կարող էին հպարտանալ նաև ֆրանսիացիները, որոնք աշխարհին են նվիրել այդ հրաշք խմիչքը: Եվ իսկապես, իսկական հայկական կոնյակը երևի ամենաթունդ, ազնվագույն ալկոհոլային խմիչքն է, որ ես խմել եմ իմ կյանքի ընթացքում, իսկ ես շատ խմիչքներ եմ փորձել: Նրա մեջ ապրում է հետաքրքիր զրուցակիցը, նա օժտված է նրբագեղությամբ, զսպվածությամբ, առնականությամբ ու խորամանկությամբ, թեթևությամբ ու ուժով, դանդաղկոտությամբ ու նպատակամղվածությամբ, մաքրությամբ ու քչախոսությամբ՝ այն ամենով, ինչը հատուկ է հայի և Հայաստանի իսկական բնույթին:

Մարդու կյանքը երկխոսություն է. անսահման հետաքրքիր է մարդու և բնության միջև երկխոսությունը, իսկ ազնվագույն հայկական կոնյակի շուրջ երկխոսությունը զրույց է միաժամանակ և՛ մարդու, և՛ բնության հետ: Հայկական կոնյակը մեր խոհերի կարեկից ընկերն է, տխրության և միայնության, հույսի և հաջողության ընկերը, ընկեր է, երբ հոգիդ լցվում է երջանկությամբ, և երբ անձայրածիր գիշերը խոստանում է նվիրել զարմանահրաշ առավոտ: Հայկական կոնյակը այն միայնակ ճամփան է, որ լեռնային կեռմաններով յուրաքանչյուր մարդու վերադարձնում է տաք օջախին և մեղմ թախծին: Հայկական կոնյակը նույնքան բնական է, որքան խաղողի ընդարձակ դաշտավայրի վրա տարածվող օդը, որտեղ բիբլիական լեռն է՝ երևանյան պատուհանից այն կողմ, և Արարատյան դաշտի լուսագեղ աշունը: Իսկ դաշտերում՝ խաղողի քաղցրահամ ողկույզների մեջ, թաքնված է մեր

ամռան անցնող արևը, որը հետո կոնյակը նորից կվերադարձնի և կնվիրի մեզ՝ որպես լույսի և բարության խորհրդանիշ:

16.

Ցանկացած կարևորագույն և հանդիսավոր ճաշկերույթի պսակը հարսանիքն է: Այն ներառում է մարդկային փոխհարաբերությունների բոլոր տեսակները՝ կանանց և տղամարդկանց, ազգականների, անժանոթների, սերունդների միջև... Հարսանիքը համաձայնություն կամ կոմպրոմիս է անկեղծության և պարտքի, հույսի և փորձության, երջանկության և հաշվետվության, սիրո և ապագայի, անցյալի ու ներկայի միջև... բանականի և ոչ բանականի միջև... Երիտասարդների հարսանիքը ճակատագրի գաղտնախորհուրդ նշան է, և փեսացուի տան շենին դրված երկու շրջված ափսեները (որոնք անպատճառ պետք է ջարդել) հավասար իրավունքների և լիության ծիսական արարողակարգ է: Անվիճելի է, որ հարսանիքը բոլոր տեսակի ճաշկերույթների հավաքական խորհրդանիշն է: Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում տարբեր կերպ են տոնում հարսանիքները. անփոփոխ է մնում եկեղեցական ծիսակարգը, որն արդեն 1700 տարի է՝ պահպանում է այդ միությունը:

17.

Ամբողջ ազատությամբ, ժողովրդավարությամբ, բացահայտությամբ հանդերձ՝ հայերի ճաշկերույթներում էլ թույլ արտահայտված, բայց անփոփոխ հիերարխիականություն է առկա՝ որպես մասը այն մեծ կոմպոզիցիայի, որ կոչվում է խնջույք: Այսպիսով, ո՞վ է ղեկավարում սեղանը, ինչպիսի՞ն է սեղանի շուրջ խոսակցությունների, ծիծաղի, ժպիտների, երգերի և խոհերի ռիթմը, որքա՞ն է տևում ճաշկերույթը, և ինչպես է այն ավարտվում այն բանից հետո, երբ բոլորը հեռանում են. սրանք բարդ, չուսումնասիրված հարցեր են, սակայն յուրաքանչյուրն ինքը կպատասխանի այս հարցերին. այդպես է հայկական ճաշկերույթը:

Թամադան ճաշկերույթի դեմքն է. նրա բարության և վստահության բարձր մակարդակը, նրա խոսքը և կամքը, նրա տակտը և հավասարակշռված հայացքը, ոչ թե մակերեսային փնտրտուքը... ճաշկերույթի ողջ կառուցակարգում դա մի բարդ կերպար է: Եվ թող տա Աստված նրան առողջություն և համբերություն՝ լսելու և հասկանալու իրեն և մեզ:

18.

Ամբողջ վերն ասվածը՝ արժանիքներով և թերություններով հանդերձ, հենց հայկական ճաշկերույթն է՝ ազգային կյանքի բավական էական հատվածը, որը, դարերի ընթացքում ձևախեղվելով, փորձում է պահպանել ամենաթանկը՝ ազնվագույն հոգին և անդամաճան լավատեսությունը, անկեղծությունն ու բարյացակամությունը ինչպես միմյանց, այնպես էլ ուրիշ ժողովուրդների հանդեպ:

Արդեն շատ դարեր ազգային կյանքը կարելի է բնութագրել հետևյալ հասկացությամբ՝ կայուն անկայունություն: Հենց դրա համար մենք այսօր էլ լքում ենք արդեն անկախ Հայաստանը, հեռանում երկրներ, որտեղ կան այդ արդարությունն ու գնահատականի կայունությունը՝ ցանկացած ժողովրդի կյանքի կարևոր բաղկացուցիչը:

19.

Դե ինչ, հայկական ճաշկերույթը փոքր-ինչ երկարեց: Մենք գալիս ենք տարբեր երկրներից, տարբեր քաղաքներից և գյուղերից, տարբեր ընտանիքներից, տարբեր ժողովուրդների միջից. հաճախ մենք դժվարությամբ ենք միմյանց հասկանում, փնտրում ենք ընդհանուր արմատներ, վերադառնում դեպի անցյալը և նորից դեմառդեն զննում դեմքերը. մենք նստում ենք սեղանի շուրջ, որպեսզի հասկացված լինենք միմյանցից, որ Հայաստանը չդադարի բաբախել մեր երակներում: Մենք բաժակաճառեր ենք ասում և լռում ենք, մենք աղոթք ենք արտասանում և հասկանում ենք մեզ. ինչ լավ է, որ կա այս սեղան նստելը, կա ուրախության, հույսերի և սխալների այս տարածությունը: Ինչ լավ է, որ կա երգը, և կա դուդուկը, որը ստիպում է մեզ հիշել արևի բույրը հայրենիքի խանձված քարերին, ինչ լավ է, որ կարմիր գինին մեր կողմից չի ասոցացվում սպանվածների մարդկային արյան հետ, այլ խոսում է հողի ուժի մասին: Չէ՞ որ մենք 20-րդ դարը շահած ազգ ենք, քանզի վիթխարի են կորուստները, և փառահեղ են հաղթանակները: Եվ դա մեր փորձն է: Եվ մենք մեկն ենք ամենահին և ամենաերիտասարդ ազգերից, և մենք նայում ենք դեպի ապագան: Հայերի աշխատասիրությանն ու համառությանը սահման չկա: Չէ որ մեր կամքը Հայաստանի քարերին դարերով ստիպեց խոսել: Մենք կառուցում ենք մեր հայրենիքը և ուզում, որ նա ծաղկի, բայց անհրաժեշտ է, որ մենք ջանք գործադրենք ինքներս մեզ վրա, հասնենք միմյանց հանդեպ իսկական հայկական համբերատարության և բարյացակամության. չէ՞ որ միայն բարությունն ու սերն են մեզ փրկել դաժան հարյուրամյակների ընթացքում, դրանք անհրաժեշտ են և հիմա: Այն ժամանակ միայն կարելի կդառնա հեշտ շնչել և հեշտ կատակել հայկական շատ գեղեցիկ սեղանի շուրջ: